Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ վերջին շրջանում հաճախ են դարձել փաստաբաններին իրենց մասնագիտական գործունեության ընթացքում վիրավորելու դեպքերը: Միաժամանակ հարկ է ընդգծել, որ միայն քաղաքացիաիրավական պատասխանատվությունն արդյունավետ միջոց չի հանդիսանում փաստաբանի արժանապատվությունը և գործարար համբավը պաշտպանելու համար: Այս դեպքում անհրաժեշտ է նախատեսել քրեական պատասխանատվություն՝ հատկապես որպես պրևենտիվ միջոց:

Ինչ վերաբերում է փաստաբանին զրպարտելու արարքը քրեականացնելու առաջարկին, ապա, նախ և առաջ, կարևոր է արձանագրել, որ գործող քրեական օրենսգրքի 344-րդ հոդվածի ներկա խմբագրությամբ՝ արդեն իսկ քրեորեն հետապնդելի արարք է որակվում դատախազին, քննիչին, հետաքննություն կատարող անձին կամ դատական ակտերի հարկադիր կատարողին զրպարտելը: Հետևաբար՝ նշված անձանց ցանկում փաստաբանին, որպես արդարադատության իրականացմանը նպաստող կարևոր դերակատարի, չներառելը բացթողում է, որն անհրաժեշտ է լրացնել:

Հատկանշական է, որ նույն օրենսգրքով քրեական պատասխանատվություն է նախատեսվում նաև Մարդու իրավունքների պաշտպանին, կապված նրա լիազորությունների իրականացման հետ, վիրավորելու համար (332[2]-րդ հոդված):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր մի շարք վճիռներում հատուկ ընդգծել է փաստաբանի մասնագիտության կենտրոնական դերն արդարադատության համակարգում և իրավունքի գերակայության ապահովման գործում: Ինչպես նշել է Եվրոպական դատարանը, առանց անհարկի խոչընդոտների իրենց մասնագիտական գործունեությամբ զբաղվելու փաստաբանների ազատությունը հանդիսանում է ժողովրդավարական հասարակության էական բաղադրիչ և անհրաժեշտ նախապայման Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի պահանջների իրագործման համար[1]:

Այսպիսով, փաստաբանի նկատմամբ նրա մասնագիտական գործունեության հետ կապված որևէ ոտնձգություն և ճնշում անթույլատրելի են և պետք է ստանան

---

[1] *Էյչին ու ուրիշներն ընդդեմ Թուրքիայի վճիռ, գանգատներ թիվ 23145/93 և 25091/94, 669-րդ կետ*

խստագույն իրավական գնահատական: Իրավական պետություն կառուցելուն ձգտող հասարակությունում փաստաբանը պետք է լինի հարգված և պաշտպանված ու անխոչընդոտ իրագործի անձին պաշտպանելու իր առաքելությունը:

Ուսումնասիրելով գործող քրեական օրենսգիրքը՝ կարելի է համոզվել, որ մինչ այժմ պատշաճ քրեականացման չի արժանացել փաստաբանի նկատմամբ կատարվող նմանօրինակ ոտնձգությունը: Մասնավորապես, համաձայն 332[3]-րդ հոդվածի 2-րդ մասի՝ փաստաբանի նկատմամբ սպանության, առողջությանը վնաս պատճառելու, գույքը ոչնչացնելու կամ վնասելու սպառնալիքը՝ կապված նրա լիազորությունների իրականացման հետ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի 200-ապատիկից 500-ապատիկի չափով, կամ կալանքով՝ 2-3 ամիս ժամկետով: Այսինքն՝

- մի կողմից, տվյալ հոդվածով պատժելի է բացառապես սպանության, առողջությանը վնաս պատճառելու, գույքը ոչնչացնելու կամ վնասելու սպառնալիքը՝ կապված նրա լիազորությունների իրականացման հետ, այն դեպքում, երբ դատախազի մասով երաշխիքները շատ ավելի բարձր են (332-րդ հոդվածի 2-րդ մասի հանցակազմ),
- մյուս կողմից, քննարկվող հոդվածի սանկցիան չափազանց մեղմ է՝ արարքի հանրային վտանգավորությանը համեմատ:

Ավելին, գործով պաշտպանների վրա ճնշումներ գործադրվելու դեպքում, երբ պետությունը որևէ կերպ չի միջամտում և չի ապահովում նրանց անվտանգությունը, համապատասխան դիմումի առկայության դեպքում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը կարող է պետության դեմ վճիռներ կայացնել, ինչը որևէ կերպ չի կարող բխել երկրի շահերից:

Ներկայացված նախագծով դատախազին հավասար երաշխիքներ կսահմանվեն փաստաբանների մասնագիտական գործունեության համար, ինչպես նաև կնախատեսվի խիստ պատիժ փաստաբանի գործունեությանը ապօրինի միջամտելու, նրան սպառնալու, վիրավորելու, զրպարտելու կամ այլ ձևով փաստաբանի մասնագիտական գործունեությանը միջամտելու համար: